

անմատոյց շիջանել[ի] լինին հրոյ, անշիջանե-
լիաւն ձուլեալք: * Եւ զի յանդ [ելե]ալ մեղ-
մանան գործաւդք չարի, բայ[ց] չարագոյնք
քան զչարսն անյագ են: Վասն այնորիկ ընդ
ամ[ենայ]ի աւրինակս անցուցին տ[անջա]նաց-
ընդ կապանս, ընդ [բանդ], ընդ քաղց, և ընդ
ծար[աւ], ընդ բանս անարգանաց, ք[նդ ք]ար-
կոծանս մահու: Ընդ ք[արշ]անս զկնի մա-
հու: ընդ հու[ր] [ի կատա]րածի, հազիւ ապ
[ալուեալ] դադարեցին: Բազում ա[նդ]ամ
ի սրբոց մահու հանդարտ . . .

** ի խս . . .

բբ . . .

մե . . .

ան . . .

ուն . . .

բար . . .

զգեալ զի զկնի մահու ոչ յա[նդ]գնին: Նա-
հանջին ապա այնուհետեւ պատկառեալք յան-
ծախութենէ հրոյ, Համայն և [յ]ագին չա-
րանախանձիցն կամք: Ի հանգիստ և զքաջն
փոխեն վկայ զանխախալով ի քարկոծչացն ծը-
նողքն, ի սեպհականն *** իւրեանց տեղի ի հա-
սարակ հաւատացելոցն գնելով շիրիմս, անդի-
տանան զաւրինակ . . .

[վերջին տող վերջին թերթի]:

ՅՈՎՍԷՓ ՆՈՐԱՇԷՆՅԻ

Այս վկայի մասին մեր ունեցած տեղեկու-
թիւնները Յայսմաուրբից էին (յուլիանի 19, տն
նաւ Լիակատ. Վարք Սրբ. Ազգեր. հ. Ժր. 291,
Ալիշան, Այրարատ, եր. 257, 358, 434), Այթմ
ունինք ժամանակակցի պատմութիւնը, ԹԻ-Գ
րից, Այս վկայարանութիւնը առնում ենք մենք №
936, 6 ճառընտրից, որի մասին մի քանի անգամ
առիթ ենք ունեցել խօսել, **** Սրբի նահատա-
կութեան թուականն է ՈԺԹ (1170), իսկ ճառընտ-
րի գրութեան թուականը՝ ամենայն հաւանակա-
նութեամբ՝ ՈԱԶ (1187), ուրեմն միայն 17 տարի
նահատակութիւնից յետոյ գրուած, ճառընտրի
գրիչը թերաւոր ընդօրինակող է, որով և շատ
տեղեր գրուածքի մէջ կարող են փոքր ի շատե
այլալուծւած լինել, Այսպէս՝ Վանայ ծովի ձկների
մասին ասացուածը՝ «մանրաղ ձկուէն ք» թերեւ
լուազոյն է կարգալ Տարեղ ձկուէն (Տ=Մ, Ա=Ե),
եթէ սակայն մանրաղ չէ նշանակում՝ մանր և
աղի, Վկայարանութեան հեղինակը յայտնի չէ,
բայց կայ Յովսէփ վկային նուիրուած մի ներբողեան
ԹԻ-Գ գարի մի հեղինակից, Դաւիթ անուշով, Այդ
ներբողեանի սկզբնաւորութիւնն ու վերջարանութիւ-

նըն են միայն հրատարակուած («Այրարատ» Ալիշ.):
Ներբողեանի մի անորոշ ասացուածից հնարաւոր է
հետեւեցնել, որ այս վկայարանութեան հեղինակն էլ
նոյն Դաւիթն է. «այլ զի իրաւացի վարկար ըստ
պատմութեան ճշգրտարանութեան և զգովեստի-
ցըն մեզ ընուլ պարտս, կամ «եւ գրուագս գովեստից
ընդ պատմութեան նորին գովելի կենացն
և նահատակութեան յարահիւսել» (Այր. եր.
358), ներբողեանի խնդրոյն է ոմն Մխիթար (=«եւ
զանուն Մխիթար ական յանձին կրողի»), որ կոչ-
ուում է «վկայաւոր անձն», Անհաւանական չէ,
որ այս Մխիթարը նոյն ինքն Գոշ Մխիթարը լինի,
Խոսրով Գանձակեցուն ներբողեան գրողը:

Մինչև այժմ անորոշ էր այս թուրք կամ
պարսիկ վկայի հայրենի նորաշէնք գիւղի տեղը,
չայր Ալիշան կարծում էր այդ լինել Դուինի մո-
տերը, սխալուելով Յայսմաուրբի մութ ասացուա-
ծից, Այթմ հաստատ որոշուում է, որ այդ Աո-
տայից նորաշէնն է, այժմեան Թազա—Քեանդը:

Հատ հետաքրքրական է այս վկայարանու-
թիւնը մանաւանդ իւր մի քանի աշխարհագրական
նոր տեղեկութիւններով, Սրանով որոշուում է այն-
չափ վիճելի Մազազ գաւառի տեղը. «և ելեալ
գաղտագողի գնալ ի գաւառն Մազազայ, որ է
Բջնի, ի վանս Իշխանի, որ է ի մէջ երկուց
լեռանց բարձրագունից, պարփակեալ անտառախիտ
ծառաք», * Յայսմաուրբն այս Իշխանի վանքի
փոխանակ ունի Թեղեկեանց վանք, նոյնացնելով այդ
երկուսը, Ուշադրութեան արժանի է և հայկական
Տին վէպի Հրէշ Բլուրի յիշատակութիւնը՝ Սադ-
մոսափանքի մօտ: Այթմ Հրէշապատ են կոչ-
ուում Աշտարակի, Յովհաննայ—Վանքի և Սաղմո-
սավանքի սահմաններից՝ Նղուարդի հողերով մինչև
Քանաքեռու սահմանը ձգուող քարերի շեղջերը,
որոնք թերեւս պատի մնացորդներ են, Անձամբ
զննելու առիթ չենք ունեցած այդ շեղջերը, բայց
Տին վէպի լուսարանութեան համար կարեւոր է այդ
հետազոտութիւնը, Թերեւս նախահայկական մնա-
ցորդներ լինին, Հրէշ Բլուրի մասին տնս նաև ներ-
քուում Վկայարանութեան մի ծանօթութիւնը,
Ձանց ենք առնում աւելի մանրամասնութեանց
իշխել, թողնելով բանասէրներին այս փոքրիկ և գե-
ղեցիկ յիշատակարանի գնահատութիւնը:

Գալուստ Տէր-Մկրտչեան

16 Յունուարի 1897.

* Մինչև այժմ յայտնի չէր Մազազ գաւառի միջո-
տեղը, գիտենք միայն, որ նա Այրարատեան նահանգում
է, ոչ հնուս վարածութիւնից և Կոտայք գաւառներից: Թող-
նելով մի կողմ միւս հնագէտների վարկածները, յիշենք
միայն Ալիշանից, որ նոյնացնում է Գառնի և Մազազ
գաւառները (տնս Այրարատ): Աւելի մօտենում է մշմար-
տութեան Մնսրովը արքայիսկոյոս Մմրտոնեանցի մթա-
ղութիւնը այս գաւառի տեղի մասին (տնս Տեղագիր Գե-
ղարցունքի գաւառի, գլ. Դ. Վաղարշ. 1895), Այթմ ունինք
հաստատուն և որոշ մի կէտ այդ գաւառի, այն է Բջնի,
հետեւապէս ուրեմն և Բջնու գաւառը, որ մերձաւորութեան
պատճառով բնասէրներից երբեմն զուում է Նիգ (Ապարան)
և երբեմն Վարաժնունից — ժաղկածոր գաւառներում: Այթմ
հաստատապէս կարելի է ասել, որ Հրազդանը և Նրան
զուգահեռական արքունի խճուղին Սեւանի ափերից մինչև Ե-
րեւան հասնելը՝ յաջորդաբար արանցում են Վարաժնունից,
Մազազ և Կոտայք գաւառներով: Մազազում են գտնում
Բջնի, Աւախարս (Այաքերս), Սղակ, Սուխո — Փոնտան ելն:

* Զ. Ժուլիալք.

** Վեց տող պատառուած.

*** Զ. ի սեփականմն.

**** Տնս «Արարատ» 1896, դեկ. «Խոսրով Դանձա-
կեցի», սեպտ. «Ազաթ. Աղբ»:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆՈՐԱԳ ՎԱՍՅԵՆ ՅՈՎԱԿԻՄ

ՎԱՐՈՒՅՆ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆՆ

Վ. ԿԱՅՈՒԹ Ի Ի Ն

[2. էջ. 462b]

Եւաւորս անիշխանութեան մերոյ ազգի, ի նուազեալ ժամանակիս, յորում էր թիւ համարու թուականութեանս հայոց : Ռ. Ժ. և Թ. : յամս աստուածապատիւ և ննրանձնեան շնորհազարդեալ հայրապետին հայոց տեառն Ներսիսի և ի թաղաւորութեան վրաց Գէորգեայ, յորում ժամանակի բռնանայր հարստահարութիւնն Սկիւթացւոց և մեծապէս չարչարանաւք նեղեալ լինէին ազգք քրիստոնէից ազգի ազգի անիրաւութեամբ յամբարիշտ և յանաւրէն ազգէն թուրքաց : Եւ առաւելապէս ևս ի ժամանակս մեծախրոխտ և յաղթող ի մարտ պատերազմի և մեծիմաց ի հնարս հայթայթանաց անաւրէն աւրէնսդրին իւրեանց՝ մեծահարկի և անուանի եղեալ յազդս իւրեանց ամիրապետն մեծ՝ կոչեցեալն Ելտկուզ : Սա բռնացեալ տիրեաց բազում աշխարհաց : այր բարեմիտ և խաղաղարար : Եւ յաւուրս սորա բազում խաղաղութիւն եղև աշխարհաց : Իսկ որք անհնազանդ էին կամաց նորա, նուաճել ջանայր ընդ իշխանութեամբ իւր. և յոլովք մարտիրոսական հանդիսիւ չարչարեալք ի ձեռաց նորա մեռան վասն սիրոյն քրիստոսի : Ընդ որս էր և այս ճշմարիտ վկայ Բանին աստուծոյ, յազագս որոյ պատմեմքս իսկ :

Արդ պարտ է մեզ նախ գիտել և զայն թէ ուստի սա կամ յորմէ՞ ազգէ եկեալ յաշխարհս մեր զայսպիսի նահատակութիւնս կրեաց :

Այր ոմն Սեուշ կոչեցեալ, աղգաւ պարսիկ, հատուածեալ յազգէ իւրմէ, բնակէ ի գիւղ մի Նորաշէնք կոչեցեալ, որ է ի Թուրքար դաշտի, ի սահմանս Կոտայից նահանգի, մերձ առ գետն Հուրաստան, ընդ իշխանութեամբ Խոստրովակերտ քաղաքին, որ այժմ կոչի Դուլին : Որ յարբունս հասեալ մանկան

միոյ յորդուոց սորա ի տիս համբակութեան՝ անուանէր զանուն նորա Բուպագր : Եւ տայ զնա ի վարժանս, զի ուսցի զուսումն զենին իւրեանց : Եւ նորա կաց[463a]եալ անդ աւուրս բազումս տեսանէր զործս զազրութեան և այլանդակութեան, և դարշեալ ի նոցանէ փախստական լինէր անդէն ի տունս իւրեանց : Եւ յայնմհետէ թերացեալ գոյր ի գեներէ հարց իւրեանց : Եւ սնանէր ի մէջ քրիստոնէից և վարժէր ոչ իբրև զմանուկ սիրելով զթատերաց խաղս, կամ զպարս զինարբուաց, այլ ի բաց փախէր ի նոցանէ, գիտելով սնոտի և ունայն զայն և երգս սատանայական :

Եւ իբրև հասանէր ի տիս աւսարդական հասակին, վերնական կրիւք ազգամամբ սուրբ Հոգւոյն՝ փափագմամբ մեծաւ և ջերմեռանդն ըզձիւք՝ տենչայր կարգի քրիստոնէից, տեսաւելով աւր[բ]ստաւրէ ծաղկեալ բարեպաշտութեամբ :

Եւ և ի քրիստոսասէր արանց խրատեր և վարժէր և ուսանէր զկարգ քրիստոնէից, ևս առաւել յառնէ միով բարեպաշտէ : Սարգիս կոչեցեալ, որ կայր ի տունս նոցա մշակաբար, քանզի նա եղև պատճառ դարձի նորա և կելոյ : Եւ ինքն հնազանդ և հլու էր ամենայն ասացելոց նորա իբրև զերկիր, որ բուսուցանէ զսերմանեալն ի նմա :

Եւ ցանկայր հասանել կարգի քրիստոնէից, թողլով զհայրենական գենսն, զոր ունէր : Եւ աւուրս բազումս սոյնպէս կացեալ, ոչ կամէր ժուժել եռանդման Հոգւոյն, որ եւոպր ի նմա վերնական ձրիւք : քանզի կեալ ընդ ծնողս իւր և պաշտել զհաւատս քրիստոնէից խոստովանելով զքրիստոս աստուած և որդի աստուծոյ ոչ իշխէր, գիտելով զի անհնար էր նմա զայն առնել, այլ ի մոխ եղեալ զնալ հեռանալ յաշխարհ հեռաւոր, պանդըխտանալ անդ և պաշտել զհաւատս ճշմարիտս և դաւանել յայտնապէս զքրիստոս աստուած ճշմարիտ՝ և որդի աստուծոյ : Եւ ելեալ ի տանէն իւրեանց դատարկաձեռն և ունայն յամենայն ընչից, միայն զքրիստոս առնելով յոյս և տեղի ապաւինի, զմտաւ ածե[ա]լ զայն, թէ Մերկ եկաք յաշխարհ և մերկանդամ անդ :

րէն դառնալոց եմք, եւ եթէ Ունիմք կերակուր և հանգերձ և այնու շատասցուք:

Երթայ այնուհետեւ ի յաշխարհն վասպուրական, * ի Տոսպ դաւառ, ի գեաւ[ւ]ղն Առեստոյ, յորում մանրաղ ձկունքն ելանեն: Եւ անտի ** հասանէ ի դաշտն Բագենից, որ է մերձ յանառիկ գղեակն, որ կոչի Ամուկ: Հայր նորա հետամուտ եղեալ հասանէ յայնմ տեղւոյ յազգմանէ չարին, որ ոչ կամի զփրկութիւն մարդկան, այլ զկորուստ: Եւ բազում ողորական և աղերսալի բանիւք դարձուցանէր զնա խաբմամբ ասելով. Ե՛կ, որդե՛կ, դարձցուք ի տուն մեր և դու կեաց որպէս կամ է քու և մի՛ տարաշխարհիկ և աւտարամահ լինիր և մի՛ զրկեր զմեզ ի տեսութենէդ քումմէ:

Եւ նորա պարզմտութեամբ հաւատացեալ բանի նորա, կարծելով ճշմարիտ գոյ զասացեալսն, դառնայ ընդ նմա: Եւ եկեալ ի տունըս իւրեանց զպատրուակեալն վասն նորա չար խորհուրդ յայտնէր և զնէր շղթայս երկաթիս յորս [463b] եւ ի ձեռս նորա, զի էր այր չար և անդադոյնս ի կրաւնս գենին իւրեանց: Ապա կոչէ զմօրար աւրինացն իւրեանց զառաջնորդաւ, զի թերեւ հնար գտցեն դարձուցանել զնա ի դենս իւրեանց:

Եւ նոքա բազում ողորական բանս խաւսէին ասելով՝ Որդե՛ակ, մի՛ թողուր զուղիղ դենս մեր և լինիր նախատինք և ձաղանք ազգիս մերում և մի՛ տար տարապարտուց հեղուլ զարիւն քու և մի՛ թողուր զպատգամաւորն մեր, որ զայս բարութիւն շնորհեալ է մեզ և անդ զդրախտին վայելչութիւնն: *** Քանզի ամենեցուն մեք տիրեմք և բռնութիւն մեր զաւրացեալ է ի վերայ ամենեցուն: Մի՛ լսեր քրիստոնէիցն, որ կամին կորուսանել զքեզ. յիշե՛ա՛ զգութ ծնողաց քոց, յիշե՛ա՛ զքորս և զեղբարս քու զի դեռ մանուկ ես և չես ձանձրացեալ վայելչութեամբ աշխարհիս:

Դսկ նորա պատասխանեալ ասէ. Ձե՛մ անիմաստ, թէպէտ և մանուկ եմ, զի Դանիէլ երկոտասան ամաց գոլով զճերս յանդիմանեաց, և Յովսէփ ի նոյն տիս իմաստութեամբ իւրով

տիրեաց ամենայն իշխանութեան Փարաւոնի: Եւ քան զձեզ ևս տեղեկագոյն եմ ձերոց առասպելարանութեանցդ, զի սուտ և սնտփք են:

Եւ նոքա ասեն ցնա. Մի՛ փոխելանար և նման մանկանց բարբառեր, զի չես իմաստուն և հանճարեղ քան զառաջնորդս մեր, որ զայս կարգ աւրինաց ետուն մեզ:

Դսկ երանելին ասէ ցնոսա. Ծս ի մանկութեան տիսն իմում կացեալ եմ յուսումն դպրութեան ձերոյ, և իբրեւ տեսի զվարդապետս աւրինաց ձերոց ի գործս աղտեղիս զազրութեան, փախեաց ի նոցանէ, արդ յայսպիսի՛ կրաւնս մուծանէք զիս: Ձե՛մ լսելոց կորստական խրատուցդ ձերոց:

Դրբեւ զիտացին նոքա զյամառ կամս նորա և թէ չէ լսելոց բանիցն նոցա, կամեցան ջուրս յո[ւ]թել և տալ նմա ըմբել, * թերեւս յիմարեալ դարձցի: Եւ նորա կնքեալ նշանաւ խաչին՝ ոչինչ ազդէր ** նմա:

Եայնժամ հայր իւր և եղբարքն բրածեծս առնէին զնա և բազում բանս նախատանաց խաւսէին և ասէին. Մի՛ լինիր կորուստ անձին քո և մեզ: Եւ նա ժուժկալեալ տանէր համբերութեամբ բազմաւ, ունելով զյոյս իւր առ աստուած: Եւ նոքա նովին կապանաւք պահեն զնա առուրս բազումս:

Եւ իբրեւ ոչինչ գտանէր եւս իրացն, յայնժամ ոմանք ի մերձաւոր սիրելեաց իւրոց ի տգէտ քահանայից ասեն ցնա, թէ Վերին երեսաւք յանձն առ զկամս դոցա կատարել և արձակիլ յայդպիսի կապանաց, և երթ ուր և կամիս կրաւնաւորեա՛ զկրաւնս քրիստովնէից: Եւ նորա ճշմարիտ կարծեցեալ զբանս նոցա՝ յանձն առ կատարել զկամս նոցա և դառնալ յառաջին հաւատն, զոր ունէր: [464a]

Եւ նոքա ուրախացեալ արձակեցին զնա: Եւ իբրեւ առուրք ինչ անցին, յիշեաց զդաւանութիւն ուխտին, զոր յառաջն ընկալեալ էր, թէ ընդէ՛ր խաբեցայ իբրեւ զպարզամիտ դք: Եւ ելեալ զաղտագողի գնալ ի դաւառն Մաղաղայ, որ է Բջնի ի վանս Դշխանի, որ է

* 2. Վազրուրական

** 2. անդի

*** 2. վայելչութիւն

* 2. ըմբել

** 2. ասղեր

ի մէջ երկուց լերանց բարձրագունից, պար-
փակեալ անտառախիտ ծառաւք, առ այր ոմն
միանձնացեալ, որ առաւել փայլէր յաշխար-
հիս մերում մաքուր վարիւք ճգնաւորական
հանդիսիւ, քահանայական շնորհիւ զարդա-
րեալ, Սարգիս կոչեցեալ, խրատ իմն գտանել
ի նմանէ, եթէ որպէս վարեցէ զկեանս իւր
և կամ ո՛ւր երթեալ դադարեցէ: Եւ ուսեալ
ի նմանէ, երթայ այնուհետեւ ի գաւառն Սեոր-
դեաց, ի գերադրական և ի հաշակաւոր ուխտ-
սըն ի Հաղրատ և ի Սանահին:

Եւ անդ կեայր ճշմարիտ հաւատով ա-
նուանելով զանուն իւր Եովսէփ: Գրէ առ
ծնողս իւր և յայտնի առնէ զհաւատսն, զոր
ունէր առ Զրիստոս, ասելով թէ Ես քրիս-
տոնեայ եմ:

Եւ կեցեալ անդ ամս երկուս, յոյժ տա-
ռապանաւք և նեղութեամբ անցուցանէր զան-
ցաւոր կենցաղս, ոչ ունելով թոշակս մարմ-
նականս և հանդերձս: Եւ որպէս է անգթու-
թիւն և անցաւակցութիւն ազգիս մերում,
զի ոչ զթամբ գորովայի գթով յայնպիսիսն և ոչ
խնամ տանեմք հոգեւորին և մարմնաւորին,
սոյնպէս և սա անտես լեալ ի նոցանէ, և ոչ
ողորմութիւն գտեալ, քանզի այսպէս ասէին.
Միթէ պարծանք մեր են դարձ ձեր յայս
կրտսնս: Եւ թուի ինձ, թէ և այս եւս ի չա-
րէն եւ ի բարիատեացն սատանայէ լինէր, զի
նեղեցի և դարձցի յետս:

Եւ նորա բազում ժուժկալութեամբ տա-
րեալ սովու եւ մերկութեան և այլ անհնա-
րին անհանգստութեան,* զի մանուկ գոլով
տիովք և անսովոր այնպիսի կրից: Թէպէտ և
այս ամենայն գոյր ի վերայ նորա, այլ նա ոչ
նեղասրտեալ ձանձրանայր և ոչ ելանէր տըր-
տունջ ի բերան նորա, սակս ճշմարիտ և ջեր-
մեռանդն սիրոյն, զոր ունէր առ Զրիստոս:

Գիտելով թէ կեանքս այս անոտի է և
անցաւոր, անգրաւականին ցանկայր և յաւի-
տեանականին, լսելով աւր[ը]ստաւրէ զվարս
սրբոցն և զճգնութիւն նահատակաց:

Ես և զայս ևս լսէր յորանց գիտնակա-
նաց, թէ Երթ ի տեղին, ուր յետոյ ուրացող
եղեր և անդ հաստատեալ զհաւատս** զոր
ունին:

* 2. անհանգստութեան

*2. գնաւատստ

Երթայ այնուհետեւ ի վանս Մակարու,
որ է նոյն գաւառ Սեորդեաց, զի ի պատմա-
գրաց միւսնոյն կոչին սոքա: Եւ անդ ևս չգը-
տեալ հանգիստ,* զի հաց անգամ** չուտէին
ընդ նմա, իրրեւ զխարերայ համարեալ: [464b]
Ապա դէմ եղեալ գայ ի գաւառն Շիրակ, ի
վանս Հառիճայոյ, որ է յՈտն Արագածոյ ի հիւ-
սիւսոյ կողմանէ, յորում էին արք երկիւ-
կիւղաճք և պատուիրանապահք յոյժ, կա-
մեցեալ կեալ անդ: Եւ բարիատեացն չար և
զնոսա գրգռեաց. քանզի ասէին ցնա. Մի
կար աստ, այլ երթ, գնա՛ ի մէնջ, զի մի՛ վը-
նասեցուք:

Ապա գայ հասանէ յաշխարհս հայոց
յԱյրարատ գաւառս, ի Սողմոսավանս, որ է
յՈտն Արագածու ի խորածորն, ընդ որ Զա-
սաղ գետ հոսի, խոռոջացեալ ահագնաձայն
թնդմամբ, մերձ առ մեծ բլուրն Երիշեայ:***
Եւ բնակիչք տեղւոյն սիրապէս ընկալեալ, այլ
ահաբեկ եղեալ ասեն գնալ, զի մի՛ կորիցուք
դու և մեք յազգէ քումմէ յայլասեօից: Եւ
անդ ևս չգտեալ հանգիստ, քանզի բանսար-
կուն չար և անդ ևս հասանէր յարուցանել
հալածանս նմա: Զի և սա երկրորդ Վահան
երեւցաւ յաւուրս մեր: Ապա իջանէ ի մե-
նաստանն մեծ Եօհաննու կոչեցեալ վանս, որ
է նոյն Ոտն Արագածու ի վերայ Զասաղ գե-
տոյ: Եւ խորհուրդ իմն գեղեցիկ ի վերին տու-
չութենէ անտի զմտաւ ածէր երթալ ի սուրբ
քաղաքն Ծրուսաղեմ, տեսանել զտեղի ծնըն-
դեանն Զրիստոսի և զխաչելութեանն և զյա-
րութեանն և զայլ ևս սրբութեանցն և մխի-
թարիլ և լուսաւորիլ:

Եւ երթեալ նախ ի լեառն Սուկաւեթ,
զսուրբ նահատական և զճգնաւորսն զայնոսիկ
բարեխաւս ինքեան և սուգնական ճանապար-
հին իւրում ունել:

Ապա երթեալ զփափաք ցանկութեան իւ-

* 2. հանգիստ

** 2. անգամ

*** Հմմտել, գայ ժամանէ (1804 թ.) . . . Յիցիանովն
յԱպաքան . . . եւ առաջնորդեալ նոցա ընդ Եղիվարդ գեղը
դէպ յԱթոռն . . . եւ անցեալ ընդ Օշական գիւղ եւ ընդ Գե-
տառ կոչեցեալ տեղին իջանն ի դաշտն եւ հարկանեն
բանակ առ Եռէժ քաւ: Դիւան հայոց Պատմ. գիրք Ա.
եր. 177: Տես եւ Խորենացի, Բ. կն: Այրարատ, 204:

րոյ լնոյր, ոչինչ ունեւորի որով զպէտս վճարէր, բայց զտուրիչն ամենայն բարեաց: Եւ իբրեւ դառնայր՝ զմտաւ ածէր զայս ի վերին խընամոց անտի, * Թէ Չեմ կատարեալ ի հաւատս, եթէ ոչ երթեալ ի տեղի ուրացութեանն՝ անդ խոստովանեցից յայտնապէս զքրիստոս աստուած և որդի աստուծոյ: Եւ իբրեւ եկն ի գեւղն ** Նորաշէնք կոչեցեալ ի տունն իւրեանց, ի ժամ գիշերին և հայր իւր մեռեալ էր: Իբրեւ տեսին զնա մայր իւր և եղբարքն՝ զարմացան, զահի հարան և ասեն. Որդին մեր է Բուպաբու: Եւ նա ասէ. Չեմ Բուպաբու, այլ Յովսէփ. Ճշմարիտ քրիստոնեայ եմ և քրիստոսունակ և խոստովանող նորին:

Եւ նոքա ասեն ցնա. Այդպիսի հաւատով գոլով քո՝ ընդէր թաքնաբար մտեր այսր, զի լուիցեն ազգք մեր և կորուսցեն զքեզ հանդերձ մեաւք: Արդ՝ զնա յանապատ տեղիս և կեանց անդ նովին հաւատովդ և մեք հոգացուք զպէտս քո մարմնականս:

Իսկ նորա պատասխանեալ ասէ. Ոչ կացից թաքնաբար, այլ զհաւատն, զոր ի սմին տեղւոյ օւրացեալ գտայ, յայտնապէս առաջի ամենեցուն յանձն առից, կամ մեռայց, կամ կեցից աստուծոյ, զի վասն այնորիկ եկեալ եմ: [465a] Իսկ նոքա կոչեն զքահանայ ոմն Սարգիս, զի հաւանեցուցէ զնա զնալ ուրեք, և նորա բազում բանս խաւսեցեալ նմա, ասելով թէ Ոչ խնդրէ զայդ ի քէն աստուած, և ոչ ոք ի մարդկանէ մեղադիր լինի այդմ: Իսկ նա ոչ առնոյր յանձն ասելով. Չեմ լսելոց բանից ձերոց:

Ապա եղբայր նորա երկուցեալ ազգ *** առնէ վերակացուի գեղջն, եթէ Եղբայր իմ, որ ապստամբեալ զնաց ի մէնջ, արդ եկեալ է կրաւնաւոր ձեռով և քրիստոնեայ կերպիւ:

Իսկ նորա կալեալ զնա՝ զնէ ի տան բանդին ազգ *** առնելով գլխաւորի գեղջն, որ էր ի Դուին քաղաքի, որում անուն Սրջահան կոչեն: Եւ նորա եկեալ փութանակի ի գեւղն յայն, նստե[ա]լ ի տան քրիստոնէի՝ կոչէ զնա առ ինքն: Եւ իբրեւ ածին զնա զառա-

ջեաւ, նշան տէրունական խաչին կանգնեալ * կայր ի տանն յայնմիկ, իսկ նա երիս ծունր կրկնե[ա]լ և ապա ասէ ցնա. Ամիրա, բարի եկիր, խաղաղութիւն ընդ այն:

Ձի էր այր չարաբարոյ և ժանդ, ասէ ցնա. Ընդէր ոչ նախ ինձ երկրպագեցեր:

Եւ նա ասէ ցնա. Վասն զի քրիստոնեայ եմ և քրիստոնէին այնպէս պարտ է առնել:

Ասէ բռնաւորն. Ընդէր թողեր զհայրենի դենն քո և մոլորեալ եղեր:

Իսկ Յովսէփ բացեալ զբերան իւր ասէ. Ոչ եմ մոլորեալ և ոչ եմ թողեալ զհայրենի հաւատն, այլ ի մոլորութենէ դարձայ և զհաւատն հայրենի զոր ոչ ունէի գտի: Այդ առաջի քո եմ, զոր ինչ կամ է քո արա:

Իսկ նորա ընդ գլինիս մտեալ զգիշերն ամենայն և գինեզինեալ արբեցութեամբ՝ կոչէ զնա առ ինքն: Եւ սուսեր մերկացուցեալ՝ կամեցեալ սպանանել զնա: Ապա ազգ ** լինէր գեղջն և նոքա մեծաձայն ծչիւք անդր հասանէին, և բազում աղերսանաւք աղաչէին զնա, թէ Մի՛ այդպիսի արիւն հեղուլ ի միջի մերում և մի՛ զբարկութիւն տեսնն շարժել ի վերայ մեր: Եւ հազիւ դադարեցուցանէին զնա:

Ապա ի վաղիւ անդր դնէ անուր ի պարանոց նորա, տանել ի քաղաքն Դուին:

Եւ իբրեւ եհաս ի Նորագաւթ գեւղն, քրիստոնեայքն՝ եկեալ ընդ առաջ նորա, արգելին զնա յայնմ գիշերի, թերեւս զերծուսցեն զնա, և խոստանան տալ զգին նորա և թողուլ զնա: Եւ նա բռնադատեալ ի նոցանէ՝ յանձն առնոյր: Եւ նովին կապանաւք տանի զնա ի Դուին և դնէ զնա ի բանդի աւուրսութ, զի էր ամիսն արաց, յորում արեգակն տապէր զամենայն մսեղիս:

Ապա երթեալ քրիստոնէիցն տան զկէս գնոց նորա, հանելով զնա ի տանէ բանտին:

Իսկ սուրբն ոչ կամեցեալ ասէ ցնոսա. Մի՛ գնէք զիս, զի զարիւն իմ ետու փոխանակ արեանն քրիստոսի: Մի՛ արգելուք զիս ի գեղեցիկ առաջարկութենէս, և մի՛ զինչս քր[465b] իս-

* 2. անդի

** 2. ի գեղջն

*** 2. ասդ

* 2. կանգնեալ

** 2. ասդ

առնելից տայք ի զինս իմ: Դսկ նոցա ոչ լու-
եալ նմա՝ արձակեցին զնա: Եւ իբրեւ աւուրք
ինչ անցին՝ կամեցան շրջեցուցանել զնա եւ
զգինս նորա ժողովել: Դսկ սրբոյն ոչ կամե-
ցեալ՝ ասէ ցնոսա. Ընդէր զրկէք զքրիստով-
նեայոց տալով ի զինս իմ: զի ես ոչ վասն
այդորիկ եկի, այլ զի իմով արեամբս զնեցից
զարքայութիւն աստուծոյ: Եւ երթայ դար-
ձեալ ի տուն բանդին, ուր յառաջն էր ազդ*
առնելով Սրջահանին այն: Եւ նոքա ասնն
ցնա թէ Բուպար կայ առ դուրս: Դսկ նորա
եկեալ արտաքս հարցանէր ցնա. Վասն էր
եկեալ ես այսր: Եւ պատասխանեալ ասէ.
Եթէ կամէ քեզ թող զիս նովին հաւատովս
եւ մի զրկեր զաղքատս վասն իմ: ապա թէ ոչ,
զոր ինչ կամէ քո արա: Եւ նորա սրտմտեալ
յոյժ, իբրեւ զչար զազան, բրաձեծ արարեալ
զնա չարաչար զանիւ, զնէ կոճեղ ի յոտս
նորա եւ շղթայս երկաթիս ի պարանոց նորա,
պահելով ի տան բանդին:

Եւ վարժեր** երանելի նահատակն զինքն
աղաւթիւք եւ պահաւ պնդութեան ոչինչ
ճաշակելով ի տունս նոցա, այլ եւ բազում
բանիւք նախատէր զնոսա եւ զառաջնորդս
նոցա, առասպել վարկանելով զկրաւնս նոցա:
Դսկ նոցա զչարեալ՝ երկիցս ծակեցին զքիթս
նորա եւ անուր անցուցեալ շրջեցուցանէին
ընդ դուրս իւրեանց նման ուղտու, նովին
կապանաւք: Եւ նա գոհանալով զտեսնէ տա-
նէր ժուժկալութեամբ: Եւ կացեալ յայնմ
բանդի ամիսս երկու՝ կին ոմն հաւատացեալ
տանէր նմա աւուրն նկանակ մի: Զկէս նորա
ուտէր եւ զայն տայր ցնա ասելով. Տուր զայդ
յաղքատս: Եւ այնպէս մեծաւ տառապա-
նաւք անցուցանէր զաւուրսն զայն:

Եւ իբրեւ եկն ամիրապետն մեծ Աթա-
պակ կոչեցեալ, ի յոստանն Մեծ Հայոց ի
Դուին քաղաք, եւ բնակէ մերձ ի նա ի տեղի մի
Դորու կոչեցեալ, ամրոխասաստ բազմութեամբ
եւ իսպառնութ ժողովաւք:

Յայնժամ Սրջահանն ծանուցանէ ամի-
րապետին մեծի վասն նորա: Եւ նա հրամայէ
առաջի իւր տանել: Եւ զնեն զնա ի զբաստու,

զի յոյժ ներգեւեալ զոյր ի չարաչար կրից ան-
տի*: Եւ իբրեւ ածին կացուցին զնա առաջի,
եւ նա սաղմոսէր. Աստուած, յաւգնել** ինձ
նայեաց եւ Տէր՝ յընկերել ինձ փութա՛. առ
քեզ, տէր տէր, եւ աչք իմ ի քեզ յուսա-
ցայ: Եւ կուտեցաւ ամենայն ամբոխ զաւուրն
ի տեղին յայն, տեսանել զնահատակութիւն
սրբոյն:

Ասէ ցնա ամիրապետն մեծ. Հայր եւ
մայր քո պարսիկ գոյն եւ պաշտաւնեայ մերոյ
պատգամաւորին, դու յու[մ]մէ՛ հարկեալ կամ
նեղեալ յայդպիսի հաւատս դարձար, կամ
զայդպիսի ձե զգեցար:*** Արդ, լուր ինձ եւ
մի ընդզիմանար հրամանաց իմոց:

Դսկ նա ոչինչ տայր պատասխանի, այլ
միայն զնշանն տէրունական անդադար դրոշմէր
յերեսս իւր: [466a]

Ասէ ամիրապետն մեծ. Զահի հարեալ
երկեաւ ի մէնջ, առաջի իմ:

Դսկ Սրջահանն որ պահէր զնա, ասէ
ցամիրապետն. Ոչ եթէ երկեաւ, այլ չառնէ
արժանի պատասխանուոյ: Զի բազում աւուրք-
են, որ կայ առ իս ի բանդի եւ ի չարչարանս,
եւ ոչինչ լուայ ես ի դմանէ բանս թուլու-
թեան: Հրամայեա՛ սպանանել:

Ապա հրամայէ դարձուցանել եւ բերել
զնա առաջի իւր:

Ասէ ցնա դարձեալ ամիրապետն, Մի՛ կար
յայդպիսի կամս եւ տարապարտ մեռանիւր. հա-
ւանեալ ինձ եւ ես տաց զգեւզն քո հայրենի
ի ժառանգութիւն**** քեզ: Եւ զնէ առաջի
նորա ոսկի բազում:

Դսկ երանելին Յովսէփ ասէ ցնա. Ես ոչ
յուժեք բռնադատեալ եւ ոչ հարկեալ, այլ ինք-
նին կամաւք իմովք եկի ի տեղիս յայս: Ոսկիդ
այդ եւ մեծութիւն, զոր խոստանաս, արհա-
մարհեալ է առաջի իմ: Եթէ զամենայն աշ-
խարհ եւ զգաւառ, որ է ընդ իշխանութեամբ
քո, տաս ինձ, չեմ փոխանակելոյ ընդ այսմ
հաւատոյ, զոր***** ունիմ: Եթէ քաղցր են
կամք քո առ իս, թող զիս նովին հաւա-

* 2. անդի

** 2. յաւգնեալ

*** 2. սցեցար

**** 2. ժառանգութիւն

***** 2. զոր զոր

* 2. ասդ

** 2. վարժել

տաժքս ապա թէ ոչ՝ զոսկիդ զայդ տուր սպանողաց իմոց:

Ասէ ամիրապետն մեծ. Ամենքեան հրամանաց իմոց հնազանդ են և դու ընդդիմանաս և նախատես զառաջնորդն մեր:

Պատասխանի ետ սուրբն և ասէ ցնա. իմ երթեալ է յԾրուսաղեմ և տեսեալ զտեղի ծննդեանն և զտեղի չարչարանացն և զյարու թեանն և զհամբարձմանն և զայլ նահապետացն տեղի և զգերեզմանս, իսկ զպատգամաւորին ձերոյ ոչ ուրեք տեսի կամ գտի:

Ապա հրամայէ բաղմութեան այլասեռ զաւրուս, որ շրջափակեալ շուրջ կային զնովաւ, սպանանել զնա և քարկոծել:

Եւ նոքա իրեւ զգազան արիւնարբու մըրմըռեալ կըծտէին զատամուսն իւրեանց, և կալեալ զձեռանէ նորա աստի և անտի* ընթացուցանէին ի տեղի սպանմանն:

Իսկ երանելի վկայն ոչ զաղարէր յասելոյ զսագմոսս զայս. Վասն քո մեռանիմք զաւրհանապա՞ վասն քո հեղու՞մ զարիւն իմ որպէս Դու վասն իմ:

Եւ նոքա հարկանէին զնա, ոմն ձեռամբ, ոմն փայտիւ, և բազում բանս նախատանաց ասէին:

Իսկ նա ասէր. Տէր, մի՛ համարիր սոցա մեզս, զի ոչ գիտեն զինչ խաւսին:

Եւ եղբայր նորա անկեալ յոտս նորա, բազում աղաչանաւք և արտասուաւք ասելով. Մի՛ տար սպանանել զքեզ, առ այժմ յանձն առ զհրամանս դոցա կատարել և յետոյ որպէս կամ է քո կեաց:

Իսկ սուրբն խոժոռեալ ասէ ցեղբայր իւր. Երթ յետս, հակառակ իմ ես, մի՛ զրկեր զիս ի մարտիրոսական նահատակութենէս, զի փրկիչն հրամայեաց, թէ Ուր ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հաւր իմոյ, որ յերկինս է:

Եւ իրեւ սակաւ հեռացուցին, խազխանն այն, որ պնտեալ ունէր զաջոյ ձեռն նորա, հարկանէ զանակաւ զձախ կուշտ նորա: Եւ պատառեալ [466b] հերձաւ մինչև յաջուն: Իսկ նորա յերես անկեալ թաւալէր յարիւն իւր: Ապա որ շուրջն կային հարկանէին զնա, ոմն սրով, ոմն քարիւ և մեռելոտի ոսկերաւք: Եւ

զոր ինչ անկանէր ի ձեռս նոցա արկանէին ի վերայ նորա: Եւ հատեալ զղլուխն՝ մորթեցին, զի տարցեն յաշխարհս իւրեանց, ինչս ժողովելոյ վասն:

Եւ սրբոյն աւանդեալ զհոգին ի ձեռս աստուծոյ կենդանւոյ, ըստ այնմ թէ Հոգիք արդարոց ի ձեռս աստուծոյ են: Եւ եղբայր նորա բրեալ սակաւ մի զտեղին, թաղէ զմարմին սրբոյն հանդերձ գլխովն:

Եւ ի գիշերին յայնմիկ արհաւիրք եղեալ իրր որոտամար և թնդիւն զաւրացն, զի այնք, որք շուրջ բնակեալ էին, զգիշերն ամենայն սրտաբեկեալք անքուն լինէին: Եւ մարդասիրին աստուծոյ փառաւորեալ զփառաւորիչն իւր, բանալով զհաստատութիւնն, և լոյս կամարաձև ի վերայ նորա իջեալ առ ի պարծանս վկային և յանդիմանութիւն անհաւատիցն: Իսկ նոցա տեսեալ զարմացան սխրացեալք, երթեալք առ դատաստն իւրեանց և առաջնորդն հարցանէին, թէ Զինչ է նուրն այն, այսինքն լոյս, որ էջ ի վերայ նորա: Եւ ասէ ցնոսա, թէ Զքարինսն և զմեռելոտի ոսկերան, զոր ետուք ի վերայ նորա, պատուէ աստուած, և վասն այնր էջ լոյսն, որչափ զձեզ, որ սպանողք էք: Իսկ կէսքն ասէին թէ Մլննտ է, լոյս աստուածութեանն այրէ զնա:

Կատարեցաւ սուրբն Յովսէփ բարի խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ յամենանն ահկի, որ աւր քսան էր, յաւուր շաբաթու, յիններորդ ժամու, ի տեղին, որ Միջոց կոչի, առ եզր գետոյն Ծրասխաց մեծի, մերձ առ ոտն լերինն Մեծի Մասեաց, հանդէպ Արտաշատ քաղաքի և զըղեակ բերդի, ուր է Վիրապն մեծ, որ է տեղի չարչարանաց սրբոյն Գրիգորի. քանզի և սա պտուղ է չարչարանաց նորա:

Արդ՝ ո՞վ եղբարք քրիստոսասէրք, նահատակութիւն սորա զարմանալի է, քանզի բազում մարտիրոսք եղեն յառաջ, առաւել ևս ի Հայս, զի ծագեալ և զարդարեալ գոյր աշխարհս Հայոց արեամբ նոցա: Զի նոքա պատկեր և ապացոյց ունէին զայլսն Զի զոմանս պսակեալս տեսանէին, յոմանց վերայ լոյս կամարաձև երևեալ, և զոմանս պատուեալ յաստուծոյ և ի մարդկանէ, և այս ևս յորդո-

* 2. անդի

բեր զնոսա: Բայց սա ոչ ի տան աստուծոյ սնեալ
և ոչ գրովք սրբովք դարմանն[ա]լ և ոչ զայլս
տեսեալս այսպիսի նահատակութեամբ կատա-
րեցաւ: Որ և զարմացոյց զգաւրս վերինս:
Եւ քանզի աշխարհս Հա[յ]ոց ի վայնջուց *
երաշտացեալ և ծարաւ զոյր ցաւոյ արեան
մարտիրոսաց: արդ զովացեալ արեցաւ ա-
րեամբ սորա:

Արդ որք ջերմեռանդն զթով և յուսով
մեծաւ և բազմ[մ]ամբ սիրոյ և ճշմարիտ հա-
ւատով կատարեն գտան վկայից աստուծոյ՝
եղիցին վկայ առանց չարչարանաց, առանց
սրոյ նոցին պսակացն արժանացեալք: [467a]
Արդ յուսացեալք ի տէր ի ձեռն սոցին բա-
րեխաւսութեան հայցեցէք ի Բրիստոսէ զթո-
ղութիւն մեզ մեղուցելոցս և Բրիստոս ձեզ
և մեզ ողորմեսցի: ամէն:

Թէ որպէս վերափոխումն եղև նշխարաց նո-
րա եւ որպէս եղեալ կայ:

Այլ ոմն Սարգիս կոչեցեալ որդի Զա-
ւախի ի համբակութեան տիան իւրոյ դար-
ձեալ եղև ի հայրենական դէնէն իւրմէ ի
հաւատս ճշմարիտս, խոստովանելով զԲրիստոս
Աստուած և որդի աստուծոյ, սնեալ յանա-
պատի և ուսեալ զուսումն աստուածեղէն, և
արժանացեալ շնորհի քահանայութեան և
առաջնորդութեան եկեղեցւոյ աստուծոյ: Եւ
սա կոչեցեալ եղև ի հանդէս մարտիրոսական
մրցանաց ի Ծահի—Արմանէն, որ տիրէր գա-
ւառին Բզնունեաց և այլոց բազմաց: Եւ ա-
ւուրս ինչ արգելեալ ի տան բանդի և պատ-
գամս յղեալ առ նա խոստանայ ինչս բազումս
և մեծութիւնս, հաւասար առնել անձին իւ-
րոյ, եթէ արացէ զկամս նորա, ապա ի՞նչ ոչ
ի փայտ մահու բարձրացուցանել սպառնայր:

Եւ նորա պատասխանեալ ասէ, Եթէ զա-
մենայն աշխարհիս մեծութիւնս տաս ինձ,
յայտմ հաւատոյ ոչ կացից յետս և որով
մահու կամ է քո, առաջի քո եմ կատա-
րեա զկամս քո: Զի էր այր քաջասիրտ և
կորովախաւս, ոչ ոք կարէր պոտտախանել նմա:

Եւ արհաւիրք եղեալ կնոջ ամիրապետին,
վասն այնորիկ արձակեալ եղև ի ձեռն միջնոր-

դի, կալ ի հաւատս իւր: Եւ այլ ևս նեղու-
թիւն կրեալ վասն ուղիղ հաւատոցն:

Սա իրրե լուաւ զնահատակութիւն սրբ-
բոյն Եփեսեայի փութանակի ընթացաւ անդ-
րէն ի բանակն և իրրե աւուրք ինչ անցին,
ինդրեաց յամիրապետէն մեծ, զմարմին վկային:
Իսկ նա ասէ. Ընդէր մահ նիւթես անձին
քում, զի թէ զայդ արացես, զնոյն մահ և
զու կրեսցես:

Ապա կացեալ նորա ի բանակին աւուրս
քսան և զմահու երկիւղ ի բաց եղեալ կա-
մեցեալ թագնարար գողանալ՝ առեալ ընդ իւր
արս երկուս և հանեալ զնա ի հողոյ անտի,*
կամեցեալ սրբել զնա:

Եայնժամ իմացեալ այլասեփոցն՝ արս
վեց հեծեալս յերկարս՝ ձիւնթացս սուսերա-
մերկ զան ի վերայ նոցա: Իսկ արքն, որ
ընդ նմա էին, ի փախուստ դառնային հե-
ծեալ յերկարս ի բեանց: Իսկ նա քաջասրբ-
աեալ և պնդեալ զերկարս՝ կայր հաստատուն
ի տեղւոջն: Եւ զի էր հասարակ զիշեր և
լուսինն ուռճացեալ լուսով իւրով լուսաւորէր
զամենեանս և իրրե մաւտեցին ձեռնհաս
և նա խաւսեցաւ ի լեզուս պարսիկս: Եայն-
ժամ անտեսութիւն անկեալ զաշաւք նոցա,
անդէն ի փախուստ դառնային այնպէս զի
ոչ ընկեր զընկերի հետ գտանէր: Ապա արքն
փախուցեալք, իրրե տեսին զայն նշանս դար-
ձան յետս: Եւ եղեալ ի գրաստու ընդ մէջ
բանակին զամենայն զիշերն [467b] տանէին
աներկիւղաբար: Եւ այնպէս ի նախախնամու-
թենէ աստուծոյ աջողեալ որ ոչ ոք ի նոցանէ
զիտէր թէ զի՛նչ է, զոր բարձեալ տանին: Եւ
զգիշերն զայն գնացեալ տանէին զնա յուխտն
հռչակաւոր, ի Հաւուց Թաոս:

Ապա հանգուցանէ զնա ի տեղի մի բար-
ձրաւանդակի, որ Խաչողն կոչեն: յարեմտից
կողմանէ հանդէպ զիւզաքաղաքին Գառնու,
ի պահպանութիւն գաւառին այնմիկ, Եւ
զղլու ի սրբոյն թողեալ յեկեղեցւոյն, զի ի
ձեռն նորին բարեխաւսութեան գթացեալ մար-
դասէրն աստուած ողորմեսցի իւրոց հաւա-
տացիւց:

Եւ նմա փառք յախտեանս ամէն:

Զմեղաւոր գ[ր]էնս յիշեսց[իք] ի Քրիստոս
աղաչեմ, աղաչեմ:

* 2. ի վաղընծոց.

* 2. անդի